

**Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ**, Խաչակիրները և հայերը, հ. Ա, Ուսումնասիրություն և թարգմանություններ, Երևան, 2005, 552 էջ:

Հայ ժողովրդի պատմության կարևորագույն դեպքերը և իրադարձությունները սովորաբար աղերսվում են հայկականության արտաքին սահմաններում տեղի ունեցող երևույթների հետ, ուստի դարեր շարունակ հայ հասարակության կազմակերպման կառուցվածքը և բովանդակությունն անընդհատ խաթարվում էին: Հայ հասարակությունը հաճախ ստիպված էր լինում համախմբվել ոչ միայն ներքին պահանջմունքներից բխող հիմնախնդիրների լուծման, այլև արտաքին միջավայրի թելադրած պայմանները հաղթահարելու համար: Այս տեսակետից հայագիտության խնդիրների ու հետաքրքրությունների շրջանակներում պետք է հավասարազոր ուշադրության արժանանան ոչ միայն հայ հասարակության ներսում, այլև արտաքին միջավայրում տեղի ունեցող իրադարձությունները և երևույթները: Այսպիսի սկզբունքով անհրաժեշտ է պարզաբանել նաև հայ ժողովրդի պատմության կիլիկյան շրջանի հետ աղերսվող դեպքերն ու իրադարձությունները: Ուսումնասիրել Մերձավոր Արևելք տեղափոխված հայ հասարակության քաղաքական, մշակութային, սոցիալ-տնտեսական պատմությունը՝ հաշվի չառնելով սելջուկյան արշավանքները, պապականության արևելյան քաղաքականությունը, խաչակրաց արշավանքները, Կոմնենոսների արտաքին, մասնավորապես արևելյան քաղաքականությունը, Խաչակրաց Արևելքը և մահմեդականության մշտահողով ներկայությունը, նշանակում է հայ ժողովրդի պատմության կարևորագույն հիմնախնդիրները հանձնել լուսանցքային շարադրանքի կարգավիճակի: Համաշխարհային պատմության մեջ մեծ կարևորություն ներկայացնող այս հիմնախնդիրները վաղուց ի վեր միջնադարագիտության ուշադրության կենտրոնում են, ուստի լույս են տեսել բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ, որտեղ հետաքրքիր հատվածներ կան նաև հայ ժողովրդի պատմության վերաբերյալ: Դժբախտաբար, այդ աշխատությունները, որոնց զգալի մասը լույս է տեսել տասնյակ տարիներ առաջ, անձանթ են մնացել հայ ընթերցողին: Ճիշտ է, այդ ուսումնասիրություններում տեղ գտած որոշ փաստեր, դրույթներ և եզրակացություններ մի շարք հայագետներ օգտագործել են, սակայն խնդիրը հասարակության առավել լայն շրջանակներին ներկայացնելու մեջ է, քանզի դրանք անհրաժեշտ են էթնոսի պատմական հիշողության որոշ բաղադրատարրեր հարստացնելու և ճշգրտելու համար, ուստի հայագիտության կարևոր խնդիրներից մեկը պետք է լիներ այդ աշխատությունների հայերեն թարգմանությունները: Այս տեսակետից խիստ արժեքավոր գործ է կատարել Լ. Տեր-Պետրոսյանը:

Կոմնենոսների դարաշրջանի Բյուզանդիային, խաչակրաց արշավանքներին և Լատինական Արևելքին նվիրված հիմնարար աշխատություններում արժեքավոր տեղեկություններ կան նաև հայ-խաչակրաց և հայ-բյուզանդական փոխհարաբերությունների մասին: Նմանատիպ հետազոտություններից ընտրված է հինգ աշխատություն՝

1. Շալանդոն Ֆ., Կոմնենոսները. Հետազոտություն 11-12-րդ դդ. Բյուզանդական կայսրության մասին, հ. 2, Փարիզ, 1912 թ.:

2. Գրուսե Ռ., Պատմություն խաչակրաց և Երուսաղեմի Ֆրանկ թագավորության, հ. 1-3, Փարիզ, 1934-1936 թթ.:

3. Գրուսե Ռ., Լևանտի կայսրությունը. Արևելյան հարցի պատմություն, Փարիզ, 1949 թ.:

4. Ռանսիմեն Ս., Խաչակրաց պատմություն, հ. 1, Լոնդոն, 1951 թ.:

5. Տեր – Ներսեսյան Ս., Կիլիկյան Հայաստանի թագավորությունը (Ք. Մեթոնի «Խաչակրաց պատմություն» գրքում), Մեդիսոն, հ. 2, 1969 թ. (Լ. Տեր-Պետրոսյանը թարգմանել է հայերին վերաբերող հատվածները):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թարգմանված հատվածները կտրված են հիմնական տեքստից՝ հեղինակը աշխատության ներածական բաժինը նվիրել է խաչակրաց արշավանքների, Արևելքում խաչակրաց պետությունների և հայ-խաչակրաց փոխհարաբերությունների պատմությանը:

Քանի որ աշխատությունը նախատեսված է ընթերցողների լայն լսարանի համար, ապա 140 էջ պարունակող ներածությունը հիմնախնդիրների առավել հանրամատչելի շարադրանք է: Մակայն աշխատության այս մասը անհրաժեշտ է արժևորել:

ա. առաջին անգամ հայ ընթերցողը հնարավորություն ունեցավ մայրենի լեզվով ծանոթանալու խաչակրության նախադրյալներին, արշավանքներին, խաչակրաց պետություններին և հայ-խաչակրաց բարդ ու տարաբնույթ փոխհարաբերություններին:

բ. Հեղինակը հաճախ վիճարկում է արևմտավերնապական միջնադարագիտության մեջ քաղաքացիություն ստացած այսպիսի կարծիքներ ու եզրակացություններ, որոնք սուբյեկտիվ բնույթ ունեն և իրենց համապատասխանությունը չեն գտնում խաչակրաց դարաշրջանի տարածաժամանակային միջավայրում: Բանն այն է, որ խաչակրությունը սրբազան պատերազմի բնույթ էր կրում, ուստի և ժամանակաշրջանի աղբյուրները և պատմագիտական գրականությունը տառապում են սուբյեկտիվությամբ:

գ. Հայ-խաչակրաց փոխհարաբերությունների լուսաբանման ժամանակ Լ. Տեր-Պետրոսյանը արձանագրել է որոշ նկատառումներ, դիտողություններ, ուղղորդումներ, որոնք անկյունաքար կարող են հանդիսանալ հետագա ուսումնասիրությունների համար:

Խաչակրաց արշավանքներին և Լատինական Արևելքին նվիրված առավել ամբողջական ու հիմնարար ուսումնասիրություններում սովորաբար ներառում են նաև Հյուսիսային Ասորիքի ու Կիլիկյան Հայաստանի պատմությունը: Այսպիսի մոտեցմամբ լուսաբանում են նաև Կոմնենոսների դարաշրջանի Բյուզանդիայի պատմությունը: Հյուսիսային Ասորիքում սփռված հայկական իշխանությունների և Կիլիկյան Հայաստանի պատմության այսպիսի շարադրանքը, ինչպես իրավացիորեն նկատել է Լ. Տեր-Պետրոսյանը, «... մինչ այժմ դուրս են մնացել Հայաստանի ընթերցող լայն հասարակության, ինչպես նաև պատմաբաններից շատերի տեսադաշտից» (էջ 4):

Հետաքրքիր է նաև թարգմանվող նյութի ընտրության սկզբունքը: Եթե այստեղ որոշակի դեր են խաղացել հեղինակի նախասիրությունները և ընտրված աշխատությունների պատմագիտական արժեքը, ապա աշխատությունը մեծապես շահել է:

Հայ-խաչակրաց, հայ-բյուզանդական և բյուզանդա-խաչակրաց փոխհարաբերությունները Մերձավոր Արևելքի ռազմաքաղաքական թատերաբեմում այնպես էին միահյուսվել, որ որևէ հիմնախնդիր համընդգրկուն ու ամբողջական լուսաբանելու համար հավասարազոր ուշադրության պետք է արժանանան բոլոր կողմերը: Այս տեսակետից պատահական չէ, որ խնդրո առարկա աշխատության մեջ տեղ է գտել նաև Ֆ. Շալանդոնի ուսումնասիրության համապատասխան հատվածների հայերեն թարգմանությունը: Կոմնենոսների որդեգրած արևելյան քաղաքականության գերակա խնդիրն էր վերականգնել Բյուզանդիայի իշխանությունը Մերձավոր Արևելքում, մասնավորապես Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում, ուր հայերը և խաչակիրները արդեն ստեղծել էին իրենց պետությունները: Կոմնենոսների ռազմաքաղաքական և դիվանագիտական ճնշումներին դիմակայելու համար հայերը և խաչակիրները համատեղ կամ առանձին-առանձին երկարատև ու ծանր պայքարի մեջ մտան, որն ի վերջո ավարտվեց կայսրու-

թյան պարտությամբ: Ֆ. Շալանդոնի աշխատությունը, մասնավորապես նաև հայերին վերաբերող հատվածները այսօր էլ պահպանել են իրենց պատմագիտական արժեքը և անհրաժեշտությունը հայագիտության որոշակի հիմնախնդիրների լուսաբանման համար:

Խաչակրաց դարաշրջանի Մերձավոր Արևելքի հայկական իշխանությունների և Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրությունը, առանց Ռ. Գրուսեի երկու հիմնարար աշխատությունների օգնության, կլինի թերի ու ոչ լիարժեք: Այդ հետազոտությունների գիտական բնութագիրը բավական դիպուկ տվել է Լ. Տեր-Պետրոսյանը. «Այս առումով պետք է հատկապես ընդգծել ֆրանսիացի պատմաբան Ռընե Գրուսեի անգնահատելի դերը: Գրուսեն առաջին հետազոտողն էր, որը խաչակրաց արշավանքների ընդհանուր պատմությանը նվիրված իր կոթողային աշխատության մեջ լիովին ընդգրկեց հայկական նյութը և Կիլիկիո Հայոց թագավորությունը տեղավորեց Արևելքում հիմնված լատինական պետությունների քաղաքական համակարգում՝ Կիլիկիո պատմությունն, ըստ այդմ, վերածելով խաչակրաց պատմության ուսումնասիրման պարտադիր դիսցիպլինի» (էջ 4):

Լ. Գրուսեի մշակած այս սկզբունքը կիրառել է նաև խաչակրաց դարաշրջանի լավագույն հետազոտողներից մեկը՝ Ստիվեն Ռանսիմենը: Ճիշտ է, նրա աշխատության մեջ հայկական նյութը համեմատաբար փոքրածավալ է, սակայն դրականը այն է, որ հայկականությունը արդեն իր հաստատուն տեղն է զբաղեցրել խաչակրաց պատմությանը նվիրված ևս մեկ հիմնարար հետազոտության մեջ:

Լ. Տեր-Պետրոսյանի աշխատության թարգմանությունների բաժինը եզրափակում է Ս. Տեր-Ներսեսյանի «Կիլիկյան Հայաստանի թագավորությունը» հետազոտությունը, որը տեղադրված է Քենեթ Մեթոնի «Խաչակրաց պատմություն» գրքում: Կիլիկյան Հայաստանի պատմության համառոտ շարադրանքի ներառումը Ք. Մեթոնի աշխատության մեջ ցույց է տալիս, որ խաչակրաց դարաշրջանի Մերձավոր Արևելքի պատմության այսպիսի շարադրանքը դարձել է ավանդույթ:

Հաշվի առնելով թարգմանվող նյութերի հատվածական բնույթը և այն հանգամանքը, որ դրանք հիմնականում անծանոթ են հայ ընթերցողին՝ Լ. Տեր-Պետրոսյանը կազմել է համապատասխան ծանոթագրություններ, որոնք տեղակալված են և՛ տողատակում, և՛ աշխատության վերջում: Բացի փոխլրացնող գործառնություններից, երբ Լ. Տեր-Պետրոսյանը աշխատել է այդ հեղինակների այս կամ այն կարծիքը վիճարկել, հենվելով նրանց ուշադրությունից դուրս մնացած աղբյուրների, մասնավորապես հայկական տեղեկությունների վրա, ծանոթագրությունները արժևորվում են նաև ուրիշ տեսակետից: Բանն այն է, որ այդ աշխատությունները ծանրաբեռնված են արևմտակենտրոն գաղափարախոսությամբ, ուստի որոշ եզրակացություններ ու դրույթներ խիստ սուբյեկտիվ են: Ծանոթագրությունների հնարավորությունների սահմանում շրջանառության մեջ դնելով իրադարձությունները անկողմնակալ գրանցած աղբյուրների վկայությունները և արևմտակենտրոն գաղափարախոսությամբ չտառապող հետազոտողների կարծիքները և սեփական դիտարկումները՝ Լ. Տեր-Պետրոսյանը փորձել է ընթերցողին մոտեցնել պատմական իրականությանը:

Հատվածաբար կատարվող թարգմանությունները շահում են նաև ճիշտ կազմված անձնանունների ցանկի դեպքում, քանզի խնդրո առարկա դարաշրջանը ներկայացնող գործիչների գործունեության մի մասը մնում է չթարգմանված հատվածներում: Մանրակրկիտ աշխատանքի շնորհիվ Լ. Տեր-Պետրոսյանը ներկայացրել է անձնանունների ցանկ, ուր նշված են նաև հայկական միջնադարյան

աղբյուրներում հիշատակվող անվանաձևերը, ծննդյան, մահվան ու գործունեության տարեթվերը:

Աշխատությունը կշահեր, եթե հեղինակը տեղանունների ցանկում տեղ գտած, սակայն քիչ հանդիպող որոշ անունների բովանդակությունը նույնպես ներկայացներ, այլ ոչ թե բավարարվեր միայն դրանց հայկական ձևերը նշելով:

Լ. Տեր-Պետրոսյանի «Խաչակիրները և հայերը» աշխատությունը արժեքավոր է ոչ միայն այն տեսակետից, որ հայ ընթերցողը հնարավորություն ստացավ մայրենի լեզվով ծանոթանալու խաչակրության դարաշրջանին վերաբերող մի շարք հիմնարար աշխատություններում տեղ գտած հայկական նյութին, այլև այնտեղ շրջանառվող հիմնախնդիրները, կարծիքները և եզրակացությունները կարող են ուղղորդել հայագիտության համապատասխան թեմատիկայի հետագա զարգացումը:

Հուսով ենք, որ հեղինակը շուտով ընթերցողի սեղանին կդնի սույն գրքի երկրորդ հատորը, որի մասին մի քանի առիթներով հիշատակություն կա այս աշխատության մեջ:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ. Ս.**

Պատմական գիտությունների թեկնածու